

հիացումը կը յայտնէ անոնց խստակեցութեան վրայ, եւ «ի կերակուրս մարդկայինս ոչ հպեցելոց, այլ խոտովք վայրենի շատացեալք» (Մազ. 137): ԺԲ դարուն անուանի էր Մեղրիկ վարդապետը, որ իւր բոլոր կեանքը «չորածաշակ» անցուցեր է (Ուռ. 418): Ուրիշ մը, Մարկոս միայնակեացը, վաթսուն եւ հինգ տարի «ի խոտածարակութեան վարս» կ'ապրի, եւ իւր ամբողջ կրօնաւորութեան մէջ հաց կամ անոր նման որ եւ է բան բերանը չի դնիր (նոյն, 373): Հռչակաւոր էր Թանահատի վանքն ալ, որոյ միաբանք «աշտուն հացիւ եւ լոկ ջրով» կ'անցնէին լուր օրերը. իսկ կիւրակէն՝ «բանջարօք եւ ընդովք» միայն: Սիւնեաց եպիսկոպոսներն եւ իշխանք շատ աշխատեցան համոզել՝ որ գէթ կիւրակէ օրերն ուտեն ապուր կամ պանիր կամ իւղ, — ինչպէս եգիպտացի հին ճրգնաւորք ալ կը մեղմէին տօնական օրերու կերակուրը (Եւազ. 225, '28, '32, 116-7), — բայց անոնք չհաւանեցան. ասոր համար ալ «Թանահատք» կոչուեցան, կ'ըսէ Որբելեան (117): Նոյն Սիւնեաց մէջ կար նաեւ «խոտակերաց վանքը», որոյ բնակիչները «սակաւ ոգեպահովն ի յընդոյ կամ ի բանջարոյ շատանային» (նոյն, 171):